

«Քիւրդական հինգ գանկեր չափուած են Պ. Գիւհիւսէէն , որոնք սրոշուելով կը զատուին նշանակելի ճիւղաւորութեամբ մը , և նկատելի կերպով հակադրութիւն կը կազմեն արեւելեան Պարսիկներու , Աֆղաններու , Հինտուաներու գանկերուն : Այնուամենայնիւ , մեծ զանազանութիւնը որ Քիւրդերը կը ներկայացընեն ֆիզիքական տեսակէտէ՝ չեն թողատրեր տեսնել այս քանի մը չափումների մէջ ընդհանուր իրականութեան մը արտայայտութիւնը : Ամերիկեան Միսիսիպիները որ շատ կը գտնուին Քիւրդ կրկիներու մէջ , կը բազմապէս բնակիչները Peaux — Rougesերուն : Քիւրդ գէմքի ամբողջականը կ'ըսէ Պ. Գիւհիւսէ , կը յիշեցնէ «գիշակեր կենդանու» կերպարանքը , բայց գեղեցիկութենէստեղծապէս չէ :

Անոնք որ կ'ապրին Ուրմիոյ և Վանի լիճերու լեռնադաշտերը , և որոնց կը համարեն Քուրդահայեր՝ իջած սերունդներ՝ որ յիշատակուած է Փէրսէպոլի արձանագրութեանց մէջ . Կարտուիներ և Կորոսլիները , որոնց վրայ կը խօսին յոյն հեղինակները՝ միջնադարու և 17-րդ դարու ամբողջութեամբ և արհամարհելի գիծերով , բայց Պարսկական սահմանադրի Քիւրդերը , ունին ընդհանրապէս խոր բնկած ճակատ , իրարմէ զատուած և լայն յօնքեր , երկայն արտեւանուէրք . մեծ բերան , ցցուած ծնօտ , խիստ սրճուունգ քիթ , սրածայր և շատ մտտութեւնով :»

Ըստ Յեղագրական Անսիքլոփէսիներու , — «Քիւրդերը կը ներկայացնեն սպիտակ ցեղերու գլխադճերը , ամէն անգամ լեռնականները սովորաբար ունին աւելի խիստ կերպարանք մը և ունքերու թաւ կամարներ : Անոնք կը բաժանուին բազմաթիւ ցեղերու , իրենց մէջ կան որ կը սարապլին երկրագործութեամբ , միւսները անասնապահութեամբ ու կ'ապրին վրաններու տակ , իրենց սիրելի սպարապմունքն է աւարառութիւն գէնքի միջոցով . այնու ամենայնիւ հիւրընկալ կ'երեւին . ներկայիս անոնք Մահմանական են բայց իրենց հաւատալիքներու մէջ կը գտնուին զանազան կրօններու հետքեր :»

«Nouveau Larousse illustré, Dictionnaire Universelle Encyclopédique»